թորիկի մէջ եւ մտածում էր սուրի նման խայթող մի միտք:

Եկել էր Ստենկա Ռազինը:

Ստե՛նկա Ռազինը: Է՜յ, դու, լա՜յն տարածութիւն, ստեպների մոգութիւն, ձայն անյաղթելի, ոգի անասելի: Է՜յ, դու, անզուսպ լինելիութիւն, է՜յ, դու, մղոն մղոն առաջացող, բարձր պողպատէ կօշիկներով փոթորիկ, սրտի միջից նետուած հրաբուխ, է՜յ, դու...

Ու մինչեւ առաւօտ, խօլապար ձիւների մտրակների տակ սեղմուած, դունաթափ, նա մտիկ արաւ իր սրտում եռացող ձայներին եւ, յուսահատ, վայրի կատուի նման ափի մօտ ցատկռտեց, ու տուն մտաւ՝ առանց որ իր դէմքի վրայ որեւէ յուզմունք նշմարեն:

Ցաճախ, Սիբերիայի անծայր եւ դաժան աշխարհը, ալեկոծ ծովի նման, տատանւում էր նրա աչքերի մէջ: Նրա տուր նայուածքը ման էր գալիս Ուրալի արծաթէ գագաթների կատարին, ցատկում էր միայնութեան մէջ ոռնող ջուրերի վրայից, սաւառնում էր Օրենբուրգի կողմը ու սրընթաց իջնում էր դէպի Սամարղանդ, Մերվ, մինչեւ Կասպեան ծովի ամայի ափերը:

Այնտեղ, կիզիչ աւազների անապատում, նա դէմ առ դէմ, կանգ էր առնում խուռներամ թաթար վոհմակների առջեւ: Հարիւր հազար ձիաւորներ, ածիլած կիսալուսին գլուխներով, եռանկիւնի ուսերով, երկայներանք, մորեխի նման յարձակւում էին դաշտերի վրայ, լողալով անցնում գետերը, այրուող քաղաքների շուրջը պարում ու հովի նման սրընթաց՝ անհետանում լեռների ետեւ:

Սարերը փայլում էին արեւի տակ: Աղմըկալից զօրքերը, ձիերի վրնջոցը, վրանների տակ կուտակուած կանայք եւ երախաները... Ցած, արարական մի ձիի վրայ նստած էր փոքրահասակ, չինական նեղ աչքերով եւ դեղին դէմքով մի մարդ՝ Թիմուր Խանը: Երբ ձիից իջնում էր, նա ման էր գալիս ցատկռտելով, որովհետեւ կաղ էր եւ ձախ ձեռքը անդամալուծուած էր: Նա ման էր գալիս ցատկռտելով, վայրի կատուի նման:

Թիմուր Խա՛նը, կանանչ ալաբաստրէ աչքերով, ուսերի մէջ թաղուած անդրի իր գլխով: Թիմուր Խանը՝ վագր, բու եւ կապիկ: Տասը հազար դիակների վրայից նետի նման սուրացող մարդը, որի առջեւ Մոսկովեան կընեազները ծնկաչոք սողոսկում էին ու կապուտաչ աղջիկներ նուիրաբերում:

Բլուրների վրայից վայր նետուող զօրքերի ճերմակ կոհակները արշաւում էին ռուսական դաշտերը, արիւնաներկ ու թանձր ամպերի մէջ պտոյտ էին գալիս. անօթի գայլերի նման նետւում էին փայտաշէն քաղաքների վրայ, որտեղից հնչում էին պողպատէ փողերի յուսահատ ձայները, եւ կեռ սուրերի լայն հարուածների տակ խարտեաշ մազերով գլուխներ էին կուտակում:

Կիէվի առջեւ, ձիաւորների երրորդ խումբը քիչ ուշ հասաւ: «Բամիից աւելի արագ կրելի չէ վազել» — յայտնեց հրամանատարը: Թիմուրը ձիից վար իջաւ, ցատկեց ձիերի մօտ, շօշափեց նրանց փրփրած մսերը եւ, որովհետեւ կողքերի վրայ քիչ ճարպ էր նշմարել, գլխատել տուեց բոլոր սպաներին:

Ուրիշ մի օր, գերիների թիւը այնքա՜ն մեծ էր, որ նա հրամայեց կենդանի այդ մարդկանցից աշտարակներ շինել: Մարմինները կուտակել տուաւ մէկը միւսի վրայ, ցեխով եւ փայտերով լեցրեց եւ, երբ հասան բաւականի բարձրութեան, շինացի բանուորները, շաղախով ծածկեցին մսերի այդ պատերը: Աշտարակները մինչեւ գիշեր ճօճեցին, բարկացած օձերի նման, ու վերջապէս քարացան:

Ռուսաստանը՝ կնեազ եւ մուժիկ՝ վիզը դուրս հանեց եւ ոսկեշարդ վրանների շուրջը, ոտքերի մատների վրայ, վեհերոտ ման եկաւ: Եկան բարձրահասակ երիտասարդներ եւ գեղամարմին աղջիկներ, գոյնզգոյն զգեստներով զարդարուած, եւ թռչկոտելով սուլեցին եւ ցատկելով պարեցին, խստադէմ թաթարների առջեւ: Եկան երկայնամիրուք իշխաններ, մինչեւ գետին իրենց գլուխը խոնարհեցին եւ բիւզանդական նրբաքանդակ պնակների մէջ, հաց ու աղ մատուցին:

Այն օրից ի վեր, սլաւ ցեղի երակների մէջ բոց վազեց: Բռնաւարուած մայրերը՝ ճեղքուած աչքերով, թխադէմ մանուկներ օրօրեցին եւ մելամաղձոտ երգեր երգեցին: Ռուս կանանց ճերմակ պորտերի վրայ մոնղոլական կեռ սուրը իր հարուածի անողոք նշանը դրոշ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան